

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Թուսական յեղափոխութեան ազդեցութիւնը Եւրոպայում:—Աւստրո-Ռուսացիա, Իտալիա, Անգլիա:—Շվեդ-ճարվեգիական միութեան խզումը:—Եւրոպա եւ Թիւրքիան:

Ռուսական յեղափոխութիւնը կուռի նոր եղանակ՝ քաղաքական ընդհանուր գործադուլին տուաւ անագին քաղաքացիութիւն հասարակական-տնտեսական բարեփոխութիւնների ձգտող կուսակցութիւնների տակտիկայի մէջ:

Աւստրո-Ռուսացիայի զանազան քաղաքներում վիթխարի ցոյցեր կազմակերպուեցան սոցիալ-դեմոկրատիայի ղեկավարութեամբ. պահանջ էր դրուած՝ ընդհանուր, հաւասար և ուղղակի ընտրողական իրաւունքը: Մինիստր նախագահ Գաուլը ստացաւ զառամեալ կայսրից արդէն համաձայնութիւն այդ բեֆորմի նախագիծը կազմելու և ըայխարատին ներկայացնելու: Ժամանակի նշան է և մի այլ երևոյթ. աւստրիական պարլամենտում (րայխսրատ) լրացուցիչ ընտրութիւնների ժամանակ 30 հազար ձայների մեծամասնութեամբ պատգամաւոր ընտրուեց աւստրիական սոցիալ-դեմոկրատիայի հռչակաւոր պարագլուխ դոկտոր Վիկտոր Ադլերը: Զանազան առանձնաշնորհումներ վայելելող ազնուական-բուրժուական դասակարգերից կազմուած աւստրիական պարլամենտի մէջ այդպիսով մուտք է գործում սոց.-դեմոկրատիայի տաղանդաւոր առաջնորդներից մէկը, և հասկանալի է թէ դա որքան մեծ նշանակութիւն կ'ունենայ հէնց ընտրողական իրաւունքի նախագիծը քննելու ժամանակ:

Իտալիայում ևս սկսուել է շարժում ընդհանուր ընտրողական սկզբունքի նշանաբանով, և այդ շարժման պարագլուխ է կանգնած երիտասարդ սոցիալիստ Արտուր Լաբրիօլան, նշանաւոր տնտեսագէտ Անտօնիօ Լաբրիօլայի որդին:

Յեղափոխական ալիքը Ռուսաստանից հասաւ և խոշոր կապիտալիզմի երկիր Անգլիան: Թայմզի ասիերին հոկտեմբերի վերջերում հաւաքուած էին անագին թուով աշխատազուրկ բա-

Նուորններ իրանց կանանցով և երեխաներով և «աշխատանք» էին պահանջում: Համաշխարհային կենտրոն՝ Վիթխարի Լոնդոնի փողոցներում երգերով և դրօշակներով առաջ խաղաց այդ հըսկայական ամբոխը, Հայդ-Պարկում միտինգ սարքեց, պատգամաւորներ ուղարկեց Բալֆուրի սօս և ներկայացրեց իր պահանջները: Վախեցած խոշոր կապիտալիստները և լորդերը իսկոյն ահազին գումար հաւաքեցին՝ ոգորմութիւն առաջարկելով այդ մարդկանց, որոնք աշխատանք էին ուզում: «Եթէ մի բան չէք անելու մեր օգտին, մենք ստիպուած պէտք է լինենք, ասաց մի կին Բալֆուրին, իրար ուտել կամ այստեղ արիւնահեղութիւն անել»:—Ահա ինչ է ստեղծել աշխարհիս ամենահարուստ երկրում կապիտալիստական կարգ ու կանոնը: Բայց ոչ միայն Բալֆուրի մինիստրութիւնը, որ արդէն նոյեմբերի 23-ից գոյութիւն չունի, այլև նրան փոխարինող Կեմպբել-Բաններմանը իր լիբերալ ծրագրով չի կարող գոհացուցիչ լուծում տալ սոցիալական հարցերին, ինչպէս այդ ասել էինք դեռ 1903 թ.-ին (№ 3), բանուորական կուսակցութեան պարագլուխ Կրուկսին պատգամաւոր ընտրուելու առիթով: Սոցիալական հարցի լուծումը, վերապահուած է աւելի թարմ կուսակցութեան, այն է սոցիալ-դեմոկրատիային, որի ներկայացուցիչները պարլամենտում դեռ սակաւաթիւ են, սակայն պարլամենտից դուրսն է նրա ոյժը:

Այդ կուսակցութեան դերը աւելի մեծ է Ֆրանսիական պարլամենտում, և հանրապետութեան կառավարութիւնը սկսել է մի շարք կարևոր պաշտօններ տալ սոցիալ-դեմոկրատ գործիչներին: Այդպէս, օրինակ, Մադադասկար կղզու վրայ խաղաղ օրինակարգ հաստատելու համար, նահանգապետ զենքերալ Գալլիէնիի փոխարէն, նշանակուել է սոցիալիստ Օգանիերն, որ աչքի ընկնող տաղանդ ցոյց տուեց Լիօնի քաղաքագլխի պաշտօնում: Ներքին գործերի մինիստրութեան մէջ էլ առողջապահութեան և բարեգործութեան ճիւղի կառավարչապետ նշանակուեց սոցիալիստ Միրմանը...

Մասնակի գործադուլ միշտ լինում են թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում: Մակայն վերջերս Ֆրանսիայում տեղի ունեցած գործադուլը զինանոցներում և գոկերում առանձին նշանակութիւն ստացաւ, որովհետև Ֆրանսիական բիւրոկրատիան փորձեց «հայրենասիրական» պատրուակի տակ սահմանափակել պետական հաստատութիւնների մէջ գործադուլի իրաւունքը, սակայն գտաւ ընդդիմադրութիւն պարլամենտի սոցիալիստ և արժատական կուսակցութիւնների կողմից:

Շվեդ-Նորվեգիական տանգնապն էլ խաղաղ լուծում ստացաւ: Կուլտուրապէս բարձր այդ երկու հարևան երկրներին երկայացուցիչները և Օսկար Թագաւորը գտան որ ուժով չի կարելի միացնել այն, ինչ բնականաբար ձգտում է անջատման. և 1815 թուականից միացած Շվեդիան ու Նորվեգիան այսուհետև դառնում են ինքնակախ պետութիւններ: Ոչ միայն միութեան, այլ և կառավարութեան ձևի հարցը Նորվեգիայում վճռուեց ժողովրդական ձայնատուութեամբ (պլեբրիսցիտ): Չնայած որ սոցիալիստները ու հանրապետականները ամենաեռանդուն ազիտացիա էին ոկսել միապետականութեան դէմ, սակայն երբ ժողովուրդը ձայների ահադին մեծամասնութեամբ (260 հազ. 70 հազ. դէմ) միապետութեան կողմը դուրս եկաւ, խոնարհուեցան այդ կամքի առաջ և Միաճայն ընտրեցին Նորվեգիայի գահի համար Դանիայի պրինց Կարլոսին, որ ընդունեցով իրան առաջարկած Թագը՝ ցանկացաւ կոչուել Գահկոն VII-րդ:

Անցեալ անգամ մենք ներկայացրինք թէ ինչ թշուառութեան մէջ է բուլղար ազգաբնակչութիւնը Մակեդոնիայում, ուր նրան, իբրև յեղափոխական տարրի, հալածում է ոչ միայն թիւրք կառավարութիւնը, այլև մրցակից ազգութիւնների նացիօնալիստական կուսակցութիւնները, ջարդեր սարքելով, կրակելով բուլղարական դիւղերը: Ալբանացիները, Եւրոպական Թիւրքիայի այդ քրդերը, բնաջինջ են արել, մաքրել բուլղար տարրից իրանց շրջանի բոլոր գաւառները:

Արդ տեսանք թէ երկու տարուց աւելի ի՞նչ արաւ Եւրոպական միջամտութիւնը մակեդոնական հարցում. իսկ նրա դերը մօտ 30 տարի Թիւրքաց Հայաստանում գիտենք ու գիտենք:

Այժմ Եւրոպան էլ Ֆինանսական ինչ որ կոնտրոլի առաջարկութիւն է անում և դժկամակող Մուլթանին ստիպելու համար բոլոր մեծ պետութիւնները, բացի Գերմանիայից, զրահակիրներ են ուղարկում Պոլիս: Նոյեմբերի 2-ից մինչև օրս Եւրոպական ուլտիմատումի հետ զանազան խաղեր է անում Ելլըզլի ճիւղը և վերջ ի վերջոյ ի հարկէ նա կը շտկի իր բաները կապիտալիստական Եւրոպայի հետ, որին հարկաւոր են միայն փող և կոնցեսսիաներ: Հէնց այդ ֆինանսական կոնտրոլի աստան էլ Banque Ottomane-ի շահերն են, որոնց սքօղուած պաշտպաննութեան աւելի, քան «րեֆորմները» հետ գործ ունի Եւրոպան...»: Այդ բանկի բաժնատէրերը Յրանսիայի, Անգլիայի և այլ պետութիւնների կապիտալիստներն են, և ինչպէս մի քանի տարի առաջ վաշխառու Լորանդօ և

Թուրքիի համար զրահակիրներ ճարուեցան Դարդանելի ջրերն լողալու, այնպէս և այժմ: Եւրոպական կապիտալիստների շահերն են պաշտպանում եւրոպական բոլոր ներկայ կառավարութիւնները, և եթէ արեւելեան ազգերը այնքան միամիտ են որ կարծում են թէ մարդասիրական որեւէ զգացմունքով եւրոպան կը միջամտի նրանց արդար դատը պաշտպանելու համար—աւելի ևս շատ պէտք է տուժեն, քան տուժել են ցայսօր կուռելով աննպատակայարմար և անիրազործելի մի տակտիկայով... Միթէ այդ կապիտալիստներին ձեռնտու է արմատական միջոցներ ձեռք առնել իր կթան կովի—Թիւրքիայի բեժիմի դէմ...

Լ. Ս.

Դեկտ. 2-ին:

PRO DOMO SUA

Որքան մեզ աշողուել է նախկին ցենզուրական ճնշող պայմաններում արտայայտուել, մենք հասարակական-քաղաքական խնդիրներում ղեկավարուել ենք արմատական-պրոգրեսիւ ուղղութիւնով: Բաւական է աչքի անցնել կապիտալի, աշխատանքի, հողատիրութեան, քաղաքային տնտեսիրութեան, քաղաքային ինքնավարութեան, ազգայնական հարցի, տերրիտորիալ աւտոնոմիայի, ընտրողական սկզբունքի, կրթական հարցի, դատաստանի, բժշկական օգնութեան, եկեղեցին պետութիւնից և դպրոցը եկեղեցուց անջատելու մասին մեր պաշտպանած գաղափարները—համոզուելու համար մեր ուղղութեան նկատմամբ: Դեռ ցենզուրական պայմաններում, երբ «բանուոր» խօսքն անգամ հալածուած էր, մենք